ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ՏԻՐԱՆ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՐՊԵՍ ԾԻՍԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱՄԻՋՈՑ

«... Որքան ժամանակ այստեղ՝ այս մարմնի մեջ ենք, առանց մարմնական նյութերի եւ զգալի նշանների անհնար է մեզ մոտենալ անյութ Աստծուն, ինչպես եւ հնարավոր չէ առանց ջրի մկրտության մաքրություն, կամ առանց մեռոնի՝ Հոգի ստանալ, կամ առանց Եկեղեցու, Սուրբ Սեղանի, հացի ու բաժակի՝ պատարագ մատուցել»[1]:

Եկեղեցու ծիսական-պաշտամունքային կյանքը լի է խորհրդանշաններով եւ ժեստերով, որոնք հանդես են գալիս առանձնաբար, շատ հաճախ ուղեկցվում խոսքով: Այս առումով ծեսի մեջ գործածվող նյութական առարկաները ոչ թե լոկ արտաքին ձեւականություններ են, այլ արտահայտիչներ: Դրանց մեջ արտահայտվում է աստվածային իրականությունը՝ մարդկանց հնարավորություն տալով զգայարանների միջոցով «յուրացնելու» այդ իրականությունը եւ հաղորդակից դառնալու դրան:

Նյութական առարկան, որի հետ մարդը հարաբերության մեջ է մտնում (օրինակ, երբ որեւէ առարկա է ձեռքը վերցնում), միաժամանակ դառնում է վերջինիս անհատականության արտահայտությունը: Նյութական առարկայի օգնությամբ մարդու ինքնարտահայտման մասին կարող ենք խոսել, եթե մի պահ պատկերացնենք երաժշտական որեւէ գործիք, օրինակ՝ դաշնամուր. դաշնակահարը նվագում է, իսկ հնչյունները մեզ հասանելի են այն պատճառով միայն, որ գործիքի սրեղները ճիշտ ժամանակին եւ սահմանված հաջորդականությամբ համապատասխան լարերին են հարվածում: Նյութական առարկան, որ ծիսական արարողության մեջ չափազանց կարեւոր նշանակություն ունի, պետք է արտահայտի մարդուն՝ Աստծո հետ իր հարաբերության մեջ: Այսպիսով առարկան ինքն է գործողության մեջ մտնում: Ծիսակատարության ժամանակ այն լցվում է անեղծ շնորհով եւ թույլ տալիս ներզգայաբար հասկանալու այս աշխարհի վախճանաբանական լրումը: Վախճանաբանական այս որակը, որն իր ձեւով եւ նպատակով օտարացած է «սովորականից», իրենից դուրս ոչինչ չունի:

Այն պատճառով, որ աշխարհային այս իրերը Աստծո հետ հարաբերության մեջ են «ներքաշվում», տարբերվում են աշխարհիկ եւ ոչ կրոնական իմաստով գործածվող իրերից: Օրինակ, նեռնային լույսից մոմեղեն լույսեր են պատրաստվում, կամ ֆունկցիոնալ ջրի տարայից՝ սկիհ եւ այլն: Պաշտամունքի ժամանակ իրենց «ներքաշվածությամբ» նյութական առարկաները ցույց են տալիս, որ ողջ արարչագործությունը աստվածային սիրո եւ մերձավորության խորհուրդ կարող է դառնալ: Իբրեւ Աստծո մերձավորության նշան՝ նրանք Աստծուց իրենց լինելության բարությունն են ստանում:

Փրկության համար չափազանց կարեւոր ձեւով Աստված Իր մարդացյալ Որդու մարդ-

1 **Յովհաննէս Արճիշեցի**, Մեկնութիւն Պատարագի, Ս. Էջմիածին, 1999, էջ 24:

կային մարմնի նյութական իրականության միջոցով մոտենում է Իր ստեղծագործությանը՝ արարածներին: Նրա մարմինը «սուրբ առարկա» է, որի միջոցով Աստված հայտնում է Ինքն Իրեն, եւ մարդը շնորհ է ստանում: Խոսքը կարելի է տարածել նաեւ Եկեղեցու՝ որպես Քրիստոսի խորհրդավոր մարմնի վրա: Աստված Իր անունով հավաքված հավատացյալների մեջ է հայտնվում (հմմտ. Մատթ. ԺԸ 20):

Սակայն մարմնից եւ հոգուց բաղկացած համայնքի այս «նյութական» իրականությունը, կամ ավելի ճիշտ «նյութականությունը», տարածվում է նաեւ բոլոր այն նյութական առարկաների վրա, որոնք օգտագործվում են նույն համայնքում: Հիշյալ առարկաները մասնակից են Եկեղեցու՝ որպես Քրիստոսի խորհրդավոր մարմնի աստվածամարդկային բնությանը: Այսպիսով, Եկեղեցու ողջ գործունեությունն իր մեջ կրում է Քրիստոսի երկու բնությունների՝ աստվածայինի եւ մարդկայինի դրոշմը:

Վաղմիջնադարյան քրիստոնեական պատկերացման համաձայն՝ Ս. Հոգին, որպես Աստված եւ աստվածային շնորհների պարգեւատու, գործում է ոչ միայն Քրիստոսի մարդկային բնության եւ կամ Ս. Պատարագի կանոնի խորհրդակատարության ժամանակ արտասանված վերակոչման աղոթքի, բայց նաեւ օրհնված եւ նվիրագործված առարկաների միջոցով: Որովհետեւ որեւէ սրբապատկեր կամ խաչ ոչ միայն աղոթքի ժամանակ մեր պատկերացումների ուժը թեքելու թանձրացական արտահայտությունն են, այլ նյութական այն միջոցները, որոնք իրենց մեջ, մարդկային արվեստից բացի, էներգիա, աստվածային ուժ են պարունակում[2]:

Մյուս կողմից՝ յուրաքանչյուր առարկայի կամ իրի երեսում թաքնված է ծածուկ մի գաղափար: Եւ եթե հասկանալի է դառնում որեւէ առարկայի երեսում թաքնված գաղափարը, միայն այդ ժամանակ է հասկանալի դառնում ողջ իրականությունը (նորպլատոնականություն): Դրա համար կարող ենք ասել, որ ծիսակատարության ժամանակ օգտագործվող նյութական առարկաները, ինչպես օրինակ՝ եկեղեցական սպասքը, խունկը, զգեստները, մոմը, նաեւ երգեցողությունն ու խոսքը «պատկերագրական» բնույթ ունեն: Դրանք հոգեւոր աշխարհի ներկայության նյութական նշաններ են, խորհրդանիշեր՝ բառիս իրապաշտական իմաստով: Այս խորհրդապաշտությունն արտահայտվում է հիշատակության միջոցով, քանի որ դրանք ոչ միայն հիշեցնում են, այլեւ տեսանելի դարձնում ներկա խորհուրդը[3]: Հունական αναμνεσις «անամնեսիս» բառը նշանակում է ոչ թե պարզ հիշողություն, այլ մատնանշում է մուտքը դեպի խորհուրդ, Եկեղեցու մեջ միշտ ներկա որեւէ իրականության հայտնությունը: Բայց որպեսզի այս նյութական առարկաներն իրենց էության նախատիպի զորությունը ստանան, օրհնության կամ սրբագործման կարիք ունեն: Այսպես, Ս. Գիրքը օրհնվելով՝ Աստծո խոսքի զորավոր շնորհաց ավանդիչն է դառնում, խաչը նյութ, պատժական գործիք եւ ձեւ լինելով հանդերձ, օրհնվում եւ Քրիստոսի խաչելության փրկարար շնորհատուն է լինում եւ այլն[4]:

---

2 Տե՛ս **M. Kunzler**, Die Liturgie der Kirche (AMATECA 10), Paderborn, 1995, էջ 214:

3 Ծայրահեղ իրապաշտական այս պատկերացումը գտնում ենք նաեւ Պողոս առաքյալի թղթերում, երբ վերջինս, խոսելով Տիրոջ ընթրիքի մասին, հերեւյալն է ասում. «Օրհնության բաժակը, որն օրհնում ենք, արդարեւ հաղորդություն չէ՞ Քրիստոսի արյան, հացը, որը կրրում ենք, արդարեւ հաղորդություն չէ՞ Քրիստոսի մարմնի. որովհետեւ մի հաց, մի մարմին ենք բոլորս, քանի որ բոլորս էլ այդ միակ հացից ենք վայելում» (հմմտ. Ա Կորնթ. Ժ 16-17):

4 Տե՛ս **Արշակ Տեր-Միքելյան**, Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու քրիստոնեականը, Ս. Էջմիածին, 2007, էջ 390:

Բնական նյութերը քրիստոնեական ծեսում. Հաց եւ գինի

Եկեղեցական պաշտամունքի մեջ գործածվող այս երկու ընծաների քրիստոսակենտրոն խորհրդաբանությունն ակներեւ է. Քրիստոս Իր մասին իբրեւ «կյանքի հաց» (հմմտ. Յովհ. Զ 35, 48), «երկնքից իջած հաց» (հմմտ. Յովհ. Զ 51), նաեւ «ճշմարիտ որթատունկ» (հմմտ. Յովհ. ԺԱ 1) է խոսում: Հացի եւ գինու գործածությունը եկեղեցական ծիսակատարություններում, Ս. Հաղորդության խորհրդից դուրս, թեեւ ավելի համեստ, բայց եւ այնպես դեր է խաղում: Այսպես, Հիպպոլիտոս եպս. Բոստրացու (մահ. է 215թ.) հաղորդած տեղեկությունների համաձայն՝ հացի եւ գինու վրա արտասանված օրհնությունը երեկոյան ճրագալույցի արարողության հետ սիրո ճաշի՝ ագապեի սկիզբն էր ազդարարում[5]: «Եւլոգիա»-ի ընթացքում պատարագից հետո հավատացյալներին օրհնված հաց էր բաժանվում: Հայկական ծեսում սա համապատասխանում է եկեղեցում հավարտ Ս. Պատարագի բաշխվող մասի: Բյուզանդական եկեղեցիներում այս հացը կոչվել է αντιδορον (հուն. αντι- փոխարեն, δορον-նվեր, պարգեւ) եւ իր անվան համեմատ մատնացույց է անում Ս. Հաղորդության փոխարեն բաշխվող հացը: Օրհնված հացը թանձրացական արտահայտությունն է այն օրհնության, որ բաշխվում է Ս. Պատարագի խորհրդի միջոցով՝ դրան մասնակից դարձնելով նաեւ բոլոր նրանց, ովքեր Ս. Պատարագի ընթացքում չեն ստացել Հաղորդություն: Ասվածի իմաստն այն է նաեւ, որ անտիդորոնը Բյուզանդական Եկեղեցիներում վերցվում է պատրաստության ժամանակ (proskomidie) օրհնության համար նախատեսված այն հացից, որի վրա, նախատեսված կարգի համաձայն, արդեն աղոթքներ են կարդացվել: Նույն զարգացումը նշմարելի է նաեւ Արեւմուտքի Եկեղեցում, երբ միջնադարում հաղորդության համար օգտագործվող թթխմոր հացը անթթխմորով փոխարինվելուց հետո վերջինս սկսեց օգտագործվել նաեւ եւլոգիայի համար, այնպես որ վերջինս Ս. Հաղորդության հացից տարբերելու անհրաժեշտություն առաջացավ:

Վաղ Եկեղեցու կյանքում գոյություն է ունեցել գեղեցիկ մի սովորություն, համաձայն որի՝ պատարագիչ քահանան Ս. Պատարագի ավարտից հետո նշխար է մատուցել իր թեմակալ առաջնորդին, ինչպես ցարդ կատարվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում[6]: Այս գործողությունը սիմվոլիկ կերպով արտահայտում է տեղական եկեղեցու միությունը, որի կենտրոնը եւ երաշխավորը եպիսկոպոսն է[7]:

Ինչ վերաբերում է գինու գործածությանը Ս. Հաղորդության խորհրդից դուրս, ապա Ուղղափառ եւ Արեւելյան Ուղղափառ եկեղեցիների ընտանիքներում Ս. Հաղորդությունը փոխարինվում է նաեւ Պասկի խորհրդի ժամանակ ամուսնական զույգի համար օրհնված գինու բաժակով: Բյուզանդական Եկեղեցում այն հասկացվում է իբրեւ «օրհնության գավաթ», այսինքն՝ համատեղ կյանքի ցանկության թանձրացական արտահայտություն:

Սրանից զատ, Արեւելյան Եկեղեցիներից շատերում, ի թիվս որոնց նաեւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում, գինին նախատեսված է նաեւ եկեղեցական առարկա-

5 Trad Ap. 25, ed. Geerlings, 274-276.

6 Մայրավանքում նշխարը պատարագչի կողմից հանձնվում է եպիսկոպոսապետին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

7 Հակառակ այս մտայնության՝ Ամբրոսիոս եպս. Մեդալոնացու (մահ. 397 թ.) կարծիքով ոչ այնքան ժողովուրդն է կախման մեջ եկեղեցական նվիրապետությունից, որքան վերջինս՝ ժողովրդից: Ուրեմն, եւ՛ տեղական Եկեղեցու միության հիմք, եւ՛ երաշխավորը ժողովուրդն է (լատ. sancta plebs), եւ ոչ թե եպիսկոպոսը:

ների եւ իրերի սրբացման կամ նվիրագործման համար: Ամեն մի ձեռագործ կամ իր այն ժամանակ է միայն ասպվածպաշտության մեջ Աստծո առաջ անխոտելի եւ հավատացյալների համար Աստծո վերաբերյալ սպասք դառնում, երբ նախապես լվացվում է ջրով եւ գինիով, եւ ապա՝ Ս. Մյուռոնով: Օրինակ, «Եկեղեցու հիմնարկության կանոն»-ը նախատեսում է քարերի նմանատիպ լվացում եւ այլն[8]: Գինով լվացման է ենթակա նաեւ եկեղեցական ողջ սպասքը (սկիհ, մաղզմա, մասնատուփ, մյուռոնաթափ աղավնի եւայլն):

Զավազանց հետաքրքրական է, որ Արեւմտյան երկրներում Ս. Հովհաննես Ավետարանչի տոնին (դեկտեմբերի 27-ին) հավարտ Ս. Պատարագի կատարվում է գինու օրհնության կարգ[9]: Օրհնության կարգի շարադրանքը մեզ հուշում է, որ սրա հիմքում ընկած է միջնադարյան «սիրո բաժակի» գործածությունը: Իսկ արարողության կապը Հովհաննես Ավետարանչի հետ ամենայն հավանականությամբ հասնում է մինչեւ Զ դարի մի ավանդություն, համաձայն որի՝ վերջինս նախապես օրհնած լինելով թույնած գինին եւ խմելով դրանից՝ մնացել է անվնաս:

Ջուր

Քանի որ ջուրը կյանքի նախապայմաններից է եւ միաժամանակ մաքրագործող հատկություն ունի, մկրտության խորհրդից դուրս քահանայի օրհնությամբ այն նաեւ չարխափան հատկություն է ձեռք բերում եւ օգտագործվում թե՛ պաշտամունքի մեջ եւ թե՛ նրանից դուրս: Աստծո տաճար մտնելուն կամ աղոթքին նախորդող լվացումների եւ սրսկումների մասին գտնում ենք ոչ միայն մովսիսականության (հմմտ. Ելք Լ. 20-21), այլ նաեւ վաղ քրիստոնեության մեջ: Որ դա կապված է եղել բնության ամենատարրական խորհրդաբանության հետ՝ պարզ երեւում է նաեւ այն բանից, որ նման լվացումներ են ճանաչում նաեւ համաշխարհային այլ կրոններ, ինչպես օրինակ, իսլամը, սինտոիզմը եւ այլն[10]: Ղեւտացվոց գրքում ջուրն ունի անդրանցական զորություն, որ հավատացյալ հրեային մաքրում է ծիսական անմաքրությունից (հմմտ. Ղեւտ. ԺԱ-ԺԵ):

Ջրի այս խորհրդաբանությունն իր ներգործուն ազդեցությունն է ունեցել նաեւ Պողոս առաքյալի՝ մկրտության ասպվածաբանության վրա: Եւ քանի որ վաղ քրիստոնյաների համար ջուրն օժտված է եղել չարխափան եւ դիվահալած զորությամբ, ջրի օրհնությունը դիտվել է սերտ հարաբերության մեջ դիվահանության հետ:

Շատ հնարավոր է, որ հին ժամանակներում Ս. Պատարագի խորհրդի ժամանակ դեռեւս չնվիրագործված ընծաները (իմա՛ հացն ու գինին) վերցնելուց հետո քահանայի ձեռքերը լվանալը ավելի շատ գործնական բնույթ է ունեցել: Այսօր, սակայն, լվացումն ավելի շատ խորհրդանշական բնույթ ունի եւ ծիսական մաքրություն է իրագործում, ինչպես որ դրա ժամանակ արտասանվող սաղմոսն է հուշում. «Լուացից սրբութեամբ զձեռս իմ...»[11]: Իբրեւ ասվածի ապացույց կարելի է նշել նաեւ այն փաստը, որ սարկավագները, որոնք սկիհը եւ չնվիրագործված ընծաներն են վերցնում, լվացում չեն կատարում: Ուրիշ կրոններում եւս

8 Տե՛ս «Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ», Պոլիս, 1807, էջ 157:

9 Ժողովրդական լեզվով հայտնի է նաեւ «Սուրբ Հովհաննու գինի» անվամբ:

10 Տե՛ս **G. Podhradsky**, New dictionary of the Liturgy, Inssbruch a. o., 1966, էջ 201:

11 «Խորհրդատետր Սրբոյ Պատարագի ըստ ծիսի Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Հայաստանեայց», Վաղարշապատ, 1880, էջ 3:

հայտնի են նման լվացումներ՝ իբրեւ խորհրդանշական գործողություններ, որոնց նպատակը ներքին մաքրությունն ու աղոթքի պատրաստությունն է:

Քրիստոնյա Արեւմուտքում, հատկապես մերովինգյան եւ կարոլինգյան շրջանի վանքերում, կանոնավոր կերպով տեղի են ունեցել ջրով սրսկումներ, որոնք հավատացյալին պետք է դրդեին դեպի մկրտության ուխտ եւ մկրտական շնորհի վերանորոգություն: Սկսած Ը դարից՝ հայտնի են կիրակնօրյա գլխավոր ժամապաշտությանը նախորդող ջրօրհնյաց արարողություններ եւ սրսկումներ, որոնք ուղեկցվում էին Ծ սաղմոսի «Յողեա յիս մշտկաւ...» երգեցողությամբ: Այսպիսի ջրային սրսկումներ են ճանաչում նաեւ հայկական եւ արեւելյան ընտանիքի ծեսերը: Հայկական ծեսում դրանք տեղի են ունենում գլխավորաբար Քրիստոսի Պայծառակերպության[12] եւ Խաչվերացի տոներին, ինչպես նաեւ՝ մասնավոր առիթներով (օրինակ՝ տնօրհնեք եւ այլն):

Արեւելյան ուղղափառ եկեղեցիներում Ջրօրհնեքի արարողությունը տեղի է ունենում Ս. Ծննդյան Պատարագից անմիջապես հետո եւ խորհրդանշում է Հիսուս Քրիստոսի մկրտությունը Հորդանան գետում: Հույն Ուղղափառ Եկեղեցին Ս. Ծննդյան տոնի նմանողությամբ ունի նաեւ ամենամսյա ջրօրհնեքներ: Զավազանց հետաքրքրական է Կաթոլիկ Եկեղեցու ներկայիս թաղման արարողության ժամանակ կատարվող սրսկման մեկնաբանությունը: Վաղմիջնադարյան պատկերացման համաձայն՝ մահվանից հետո հանգուցյալի անշունչ մարմինը դառնում է չար ոգիների բնակարան: Այսպես, օրհնված ջրով հանգուցյալի մարմնի սրսկումն ասփիճանաբար մտնում է արեւմտյան թաղման արարողության մեջ եւ դառնում նրա անբաժանելի մասը, քանի որ հավատում էին օրհնված ջրով կատարվող արարողության դիվահալած զորությանը:

Յուղ/մյուռոն

Յուղը միջերկրական ավազանի անտիկ մշակույթներում ամենատարբեր նպատակների համար էր կիրառվում եւ երկնային թանկագին նվեր համարվում: Այն օգտագործվում էր կերակուրի մեջ, ինչպես նաեւ փորձված միջոց էր բժշկության բնագավառում, ծառայում էր լուսավորության համար: Իսրայելում թագավորներն օծվում էին յուղով. հինկտակարանյան տեքստերը վկայում են յուղով օծման միջոցով տրված քահանայական իշխանության (Ահարոնը եւ նրա որդիները), մարգարեական ծառայության կոչված լինելու (Ա Թագ. ԺԹ 16) մասին եւ այլն: Յուղով օծումն ասպվածային կյանքի ուժի եւ այդ նույն կյանքի լիության արտահայտությունն է դառնում: Թերեւս հենց այդ պարզ պատճառով էլ Հիսուսի ժամանակներում հրեական միջավայրում Աստծուց ակնկալված փրկիչը «Օծյալ» (հուն. Χριστος) է անվանվում:

Համաձայն Մարկոսի ավետարանի՝ Քրիստոս Իր աշակերտներին ուղարկում է ոչ միայն քարոզելու բարի լուրը, այլեւ դեւեր հանելու եւ յուղով օծմամբ հիվանդներին բժշկելու (հմմտ. Մարկ. Զ 13): Սակայն հիվանդների օծման եղանակի, ինչպես նաեւ ներգործության մասին վկայող դասական հատվածը Հակոբոս առաքյալի նամակն է[13]:

---

12 Թեեւ, ինչպես մասնագետներն են նշում, Քրիստոսի Պայծառակերպության տոնի սրսկումները գալիս են նախաքրիստոնեական շրջանից եւ որեւէ առնչություն չունեն քրիստոնեության հետ:

13 «Հիվա՞նդ է ձեզնից մեկը, թող կանչի Եկեղեցու երեցներին, եւ նրանք նրա վրա թող աղոթք անեն, թող իւղով

Հիպպոլիտոս եպս. Բոստրացու երկում հիշատակվող, հավատացյալների կողմից մատուցված եւ քահանայի կողմից օրհնված յուղը դեռեւս ավելի ուշ շրջանի Կարգ հիվանդացի յուղը չէր, որի օրհնությունը բացառապես եպիսկոպոսներին էր վերապահված[14]: Հավատացյալներն այս յուղն օգտագործում էին իրենց, ինչպես նաեւ իրենց ընտանիքի անդամների հիվանդության ժամանակ: Բայց եւ այնպես կարելի է ասել, որ սրա մեջ են ընկած Հիվանդաց օծման համար նախատեսված յուղի արմատները: Սրանից տարբեր էր մկրտության պատրաստության շրջանում օգտագործվող այսպես կոչված «երախայից յուղ»-ը, որի մասին մեզ տեղեկություններ է հաղորդում կրկին Հիպպոլիտոս Բոստրացին[15]: Յուղով այս օծումը այլաբանորեն հիշեցնում է կրկեսների մարտիկների՝ մարտից առաջ իրենց մարմինը օծելուն[16]. թերեւս դրա համար է, որ օծվում էին նաեւ ապաշխարողները:

Հիպպոլիտոսի հիշատակած նորոգ մկրտյալների «գոհաբանական յուղ»-ով օծումը շուտով դառնում է օծման յուղերի միջից ամենակարեւորը: Քրիստոնյա Արեւելքում, այդ թվում՝ նաեւ Հայաստանում, այն բազմաթիվ խոտաբույսերից եւ անուշաբույր յուղերից պատրաստված Ս. Մյուռոնն է[17]: Բայց կարելի չէ, գոնե մեզ համար, ճշտել, թե Հայաստանյայց Եկեղեցին երբ է ընդունել մյուռոնի բազմատեսակ նյութերի բաղադրությունը, որովհետեւ Հայաստանյայց Եկեղեցու մեջ էլ մեկից ավելի օծության յուղեր կային, որոնք իրարից տարբերվում էին թե՛ իրենց օրհնության, թե՛ մանավանդ գործածության եղանակներով: Պետք է նշել, սակայն, որ շատ շուտով յուղով օծումը տարածվում է նաեւ այլ արարողությունների վրա. այսպես, օրինակ, վաղ միջնադարում մեծ տարածում գտած հեւտմկրտական եւ դրոշմի խորհուրդների յուղով օծմանը, նաեւ քահանայական, եպիսկոպոսական օծումներին եւ եկեղեցու օծմանը հինկտակարանյան օրինակով ավելացան կաթողիկոսների, թագավորների օծումները եւ այլն: «Բավական է, որ մարդ մտաբերի, թե այսօրվա կյանքում ինչ նշանակություն ունի մարմնամարզությունից հետո եւ լոգանքի համար նախատեսված յուղով մարմնի շփումը, ապա միանգամայն հասկանալի կդառնա նաեւ յուղով օծման ծիսական նշանակությունը: Անհրաժեշտ է միայն, որ յուղը որպես նշան խոսի եւ հոսի, անուշ բույրը տարածվի սենյակի մեջ եւ զգայարաններին զգացնել տա կյանքի լիությունն ու երջանկությունը, որ մեզ Աստված է տալիս Քրիստոսի միջոցով եւ Ս. Հոգու մեջ»[18]:

Խունկ եւ անուշաբույր այլ նյութեր

Կասկածից վեր է, որ սկզբնապես զուտ սանիտարահիգիենիկ պայմաններից բխող խունկի գործածությունը լայն տարածում ստացած անտիկ սովորություն է եղել: Այդ իսկ պատճառով մարդիկ հավատում էին, որ խունկը նաեւ չարը վանող հատկություն ունի, հա-

---

օծեն նրան Տիրոջ անունով: Եւ հավատով եղած աղոթքը կփրկի հիվանդին, ու Տերը նրան ոտքի կկանգնեցնի: Եւ եթե մեղք գործած լինի, այդ նրան պիտի ներվի» (Յակ. Ե 14-15):

14 Տե՛ս "The New Dictionary of Sacramental Worship", ed. by Peter E., Fink S. J., Collegeville, 1990, էջ 896 :

15 Trad Ap. 21, ed. Geerlings 258: Oleum exsorcismi:

16 Հին աշխարհում մարտիկների՝ մենամարտից անմիջապես առաջ յուղով իրենց մարմինն օծելը թերեւս նպաստում էր, որպեսզի հակառակորդը չկարողանա բռնել մարտիկի մարմնի օծված վերջույթներից:

17 Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու մեջ Սրբալույս Մյուռոնի գործածության վերաբերյալ տե՛ս **Մ. Ժոռոյան**, Սրբալույս Մյուռոնը եւ Մյուռոնօրհնեքը Հայաստանյայց Եկեղեցու ավանդության մեջ, Ս. Էջմիածին, 1996, Սրբալույս Մյուռոնը, Ս. Էջմիածին, 2001: Մյուռոնի մասին տես նաեւ **M. Kunzler**: Porta Orientalis. Fünf Ost-West-Versuche über Theologie und Ästhetik der Liturgie, Paderborn 1993, էջ 599-603.

18 **Berger**, Natuerelemente 272 f.

լածում է գարշահոտություն տարածող դեւերին: Հին եգիպտացիներն իրենց ծիսական պաշտամունքում խնկին մահվան իշխանությունն ու ժահահոտությունը վանող հատկություններ էին վերագրում: Խնկի գործածությունը տարածված էր նաեւ այլ ազգերի՝ շումերների, բաբելացիների, պարսիկների, հնդիկների եւ այլոց մեջ:

Խնկի խորհրդաբանությանը միաժամանակ խարսխված է նրա ծիսական գործածությունը՝ մեծարում (հմմտ. Մատթ. Բ 11), մաքրություն (հմմտ. Ղեւտ. ԺԶ), աղոթք (հմմտ. Յայտն. Ը 32, Սղմ. ՃԽԱ 2): Մյուս կողմից, կրոնական պատկերացումներն են, որ խթան են հանդիսացել Եկեղեցու ծիսաարարողական կյանքում խնկի գործածության համար: Այսպես, գոյություն ունի վաղնջագույն արեւելյան մի պատկերացում, համաձայն որի՝ Աստվածահայտնությունն ուղեկցվում է անուշահոտությամբ, իսկ ամպը, որպես շղարշ, պահում է մարդկանց Աստծո տեսությունից, որպեսզի մարդիկ կորստյան չմատնվեն (հմմտ. Ելք ԺԹ 24):

Հովհաննու Հայտնության գրքում քանիցս հանդիպում է խնկի (բուրվառի) պաշտամունքային գործածությունը (հմմտ. Ե 8, Ը 3-5): Այսօր կասկածից վեր է, որ եկեղեցիներում խնկարկությունը սկզբնապես զուտ հիգիենիկ խնդիրներով էր պայմանավորված: Էգերիան հաղորդում է Ս. Հարության տաճարի խնկարկման մասին, որպեսզի տաճարը, հավատացյալների բազմությամբ հանդերձ, անուշահոտություն բուրեր[19]: Նույն նպատակին է ծառայում նաեւ Կեղծ-Դիոնիսիոսի մոտ հիշատակվող ժամերգության սկզբի համար նախատեսված խնկարկությունը[20], որը տակավին առկա է բյուզանդական ծեսում. սարկավագը խնկարկում է խորանը, նախօրոք պատրաստված ընծաները եւ սրբապատկերները, որից հետո՝ նաեւ ներկա հավատացյալներին:

Քահանայի առջեւից ջահերի գործածությունը եւ խնկարկությունն ամենայն հավանականությամբ առաջացել է պետական դատավորների անտիկ այն սովորությունից, համաձայն որի՝ նրանք պաշտոնապես ատյան էին մտնում իրենց օրինագիրքը վեր բռնած, առաջնորդվում էին խնկարկությամբ: Արեւելյան բարձրագույն կառավարիչների պաշտամունքից է ծագում նաեւ խնկի հարգալից օգտագործումը, ըստ որի՝ բարձրաստիճան մարդկանց առջեւից խնկարկում էին՝ փողոցի հոտերից նրան զերծ պահելու համար:

Պատվելի մեկի առջեւից բուրվառը հարգանքով կրելը, խունկի գործածությունը, հակառակ քրիստոնեության հալածանքների ժամանակվա տիտուր փորձառության, աստիճանաբար դառնում է սովորական երեւույթ: Ինչպես Արեւմուտքում, այնպես էլ Արեւելքում խնկարկությունն Իր համայնքում ներկա Տիրոջ փառաբանությանն է ծառայում, ինչպես նաեւ հավատացյալի՝ դեպի երկնավոր գահ բարձրացող աղոթքի զգայական արտահայտություն է:

Դ դարում խնկարկությունը, իբրեւ հարգանքի արտահայտություն[21], եպիսկոպոսների եւ սրբարանների համար գործածվելուց հետո, Ե եւ Զ դարերում Հունական Եկեղեցու ազդեցությամբ ներառվեց Ս. Պատարագի մեջ եւ դարձավ արարողության հաստատուն մեկ մասը:

---

19 Հմմտ. **Egeria**, Peregrinatio 24, 10, 244 :

20 Ecc. Hier. 3,2 – PG 3, 425.

21 Սուրբ Եփրեմ Ասորին (մահ. 373 թ.) իր կրակի մեջ պայման էր դրել, որ իր հուղարկավորության առթիվ խունկ չգործածվեր, որովհետեւ ասում էր, որ անարժան էր դրան:

Ավանդական քրիստոնեական հարանվանություններում խնկարկություն է նախատեսված գրեթե բոլոր ժամերգությունների համար: Խնկարկվում են նաև Ս. Հաղորդության ընծաները, ինչպես նաև Քրիստոսի բոլոր խորհրդանշանները՝ Ս. Սեղանը, Ավետարանը, քահանան, խաչը եւ այլն: Խնկարկվում են նաև հավատացյալները:

Կրակ/լույս

Հնագույն ժամանակներից կրակը դիտվել է իբրեւ Աստծու պարգեւ մարդուն, ինչպես զանազան միթոսներն են վկայում (օրինակ՝ Պրոմեթեւսի ավանդազրույցը եւ այլն): Կրակը ոչ միայն ջերմություն է պարգեւում, այլեւ լույսի աղբյուր է, այն նաեւ օժտված է մաքրագործող հատկությամբ (Ա Պետր. Ա 17 հատվածը հենց այս իմաստը նկատի ունի): Եկեղեցական արարողությունների ժամանակ կրակը, որպես լույսի այլաբանական պատկեր, ունի չափազանց կարեւոր նշանակություն, ինչպես օրինակ, Ս. Տեղյաց մեջ հավատացյալներին փոխանցվող զատկական կրակը, Տյառնընդառաջի կրակը[22], նաեւ Հռոմեական Եկեղեցու Մոխրոց օրվա[23] կրակը (թեեւ այստեղ առավելաբար մոխիրը, եւ ոչ թե կրակն ինքը), բայց նաեւ թափորների, ավետարանի ընթերցման եւ այլ առիթներով մոմերի գործածությունը եւ այլն:

Քրիստոս Իր մասին խոսում է որպես «Լույս աշխարհի» (Յովհ. Ը 12), որ լուսավորում է մարդուն: Այսպես մենք նաեւ աղոթում ենք Քրիստոսին, ինչպես օրինակ՝ «Լոյս ի լուսոյ», «Հոր կենդանի Քրիստոս», նաեւ հավատացյալներն են ներկայացվում իբրեւ «Լուսո որդիներ»: Բազում հատվածներում լույսը հանդես է գալիս որպես Քրիստոսին եւ Տիրոջը պատկանող հավատացյալների խորհրդանիշ («Դուք եք աշխարհի լույսը», Մատթ. Ե 14): Ոչ միայն «խավարը հալածող լույս»-ն է հիշեցնում Քրիստոսին, այլեւ անտիկ մշակույթի ասպվածներին ու բարձրասպիճան անհատներին ջահերով եւ մոմերով մատուցված հարգանքի տուրքը: Հիպպոլիտոս Բոստրացին նկարագրում է երեկոյան լույսի փառաբանության արարողությունը, որը, անշուշտ, այլաբանորեն Քրիստոսին է խորհրդանշում[24]: Լույսի փառաբանությունը հետագայում դարձավ երեկոյան ժամապաշտության միավոր՝ «Ճրագալույց» անունով[25]: 383 թ. Երուսաղեմում ուխտավորաբար գտնված իսպանացի հավատացյալ Էգերիան աղոթատան լուսավորման հանդիսավոր մի արարողության մասին մեզ հաղորդում է չափազանց հետաքրքիր տեղեկություններ[26]: Հին հեթանոսական «ինջեցյալների պաշտամունքում» լայն կիրառություն գտած լույսի գործածումը տարածվում է նաեւ քրիստոնյաների վրա, սակայն այստեղ լույսի գաղափարը կապվում է Քրիստոսի անձի հետ:

---

22 Թեեւ Սիմեոն Կաթողիկոս Երեւանցին կրակի շուրջը պտտվելը համարում է «խուրելի» եւ «ներմուծված գգեստների կողմից»:

23 Արեւմուտքի ավանդությամբ Բուն Բարեկենդանին հաջորդող չորեքշաբթին է (եւ ոչ թե երկուշաբթին, ինչպես պնդում է Ա. ծ. վրդ. Կռանեանը, հմտ. «Հայ ծիսական պաշտամունքը», Պէյրութ 2001, էջ 315), որ ազդարարում է Մեծ պահքի սկիզբը: Կաթոլիկների մոտ սովորություն է նախորդ տարվա Ծաղկազարդի ձիթենու ոստերը այրելով մոխրի վերածել, ապա այդ մոխիրը օրհնելուց հետո այն հավատացյալների գլխին ցանել կամ նրանց ճակատը մոխիրով խաչաձեւ դրոշմել:

24 Տե՛ս Trad Ap. 25, ed. Geerlings էջ 274-276 :

25 Հմտ. **Տիրան արդ. Պետրոսյան**, «Լոյս զուարթ». պատմաբնագրային քննության փորձ, «Էջմիածին», 2009, Ը, էջ 34-41 :

26 Տե՛ս **Egeria**, Peregrinatio 24, 4.9 – ed. **P. Maraval**, Schr 296. Paris, 1982, էջ 240, 242:

Բնական այլ նյութեր

Աղն ունի կոնսերվացնող եւ մաքրագործող հատկություն, այդ պատճառով այն մկրտությունից առաջ մատուցվում էր երախաներին՝ մեղքի ապականությունից նրանց պաշտպանելու, ինչպես նաեւ քրիստոնյա դառնալու որոշման մեջ պնդություն շնորհելու համար: Նոր Կտակարանում աղի խորհրդաբանությունը կապվում է առաքյալների եւ առհասարակ հավատացյալ մարդու հետ, ինչպես հաստատում է տերունական խոսքը. «Դուք եք երկրի աղը» (հմմտ. Մատթ. Ե 13, Մարկ. Թ 49, Ղուկ. ԺԴ 34-35): Քրիստոնեական գրականության մեջ աղը խորհրդաբանորեն հասկացվել է նաեւ որպես խրատ, խոհեմություն, անգամ որպես Բանն Աստված, որ «համեմում է մեր անհամությունը եւ ապականում մեր ապականության նեխյալ վերքերը»[27]: Աղն օգտագործվում է նաեւ հոգեւոր բարեպաշտական արարողություններում, ինչպես օրինակ մատաղի[28], տնօրհնեքի ժամանակ եւ այլ պարագաներում:

Եկեղեցու ծիսական կյանքում օգտագործվող բնական նյութերի թվին են պատկանում նաեւ տարատեսակ ուտեստներն ու դրանց օրհնությունը: Պետք է նշել նաեւ, որ պաշտամունքի ժամանակ կիրառվող բնական նյութերից շատերն իբրեւ խոկման առարկաներ են ծառայում (օրինակ՝ քարը, ծաղիկները, ռեհանը եւ այլն):

Այնուամենայնիվ, միշտ առկա է այն մտավախությունը, որ արտաքին գրավչությունն ավելի մեծ կարող է լինել, քան տվյալ արտահայտչամիջոցների արդյունքից բխող հնարավոր հոգեւոր շահույթը: Այս տեսանկյունից չափազանց կարեւոր է, որպեսզի պաշտամունքի հիմնական եւ իրական արժեքները համոզիչ կերպով ճանաչելի դառնան եւ իրենց խոսքն ասեն:

27 **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք հարցմանց, Երուսաղէմ, 1993, էջ 356

28 Տաթեւացին «մատաղ» բառն արդեն բացատրում է իբրեւ «մատռ աղ» (մատուցիր աղը): Տե՛ս անդ, էջ 657: